



ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի 6-րդ հոդվածի վերաբերյալ

Մամուլի աջակցության «ՀՆՏԵՐՆՅՈՒՍ» հասարակական կազմակերպության Տեղեկատվական իրավունքի և քաղաքականության կենտրոնը իր մտահոգությունն է հայտնում 2009 թ-ի սեպտեմբերի 24-ին ՀՀ կառավարության հավանությանն արժանացած «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 6-րդ հոդվածի առնչությամբ:

Ըստ վերոնշյալ հոդվածի նախատեսվում է պարտադրել հասարակական կազմակերպություններին ոչ պակաս քան հազար տպաքանակ ունեցող մամուլի միջոցով հրապարակել տարեկան տեղեկատվություն (ըստ էության՝ հաշվետվություն) կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման (ներառյալ ֆինանսական) վերաբերյալ:

Հիշյալ լրացման առնչությամբ մեր առարկությունները հիմնված են հետևյալ փաստարկների վրա՝

1. Կազմակերպության գործունեության թափանցիկությունը ապահովելու համար ՀԿ-ների կողմից տեղեկատվություն ներկայացնելը միայն ողջունելի է: Սակայն տեղեկատվության տրամադրումը (հաշվետու լինելը) Նախագծով նախատեսված կարգով, այն էլ ըստ պարտադիր բնույթի, մեր կարծիքով հակասում է ԵԽ նախարարների կոմիտեի անդամ երկրներին ուղղված Rec(2007)14¹ հանձնարարականի (Հանձնարարական) դրույթներին:

2. Հանրային աղբյուրներից ֆինանսավորվող ՀԿ-ների հաշվետու լինելու պահանջը, ըստ Հանձնարարականի, չպետք է անհարկի ծանր լինի և նախատեսի չափազանց մանրամասն տեղեկատվություն թե գործունեության, թե ֆինանսական հաշվետվության

¹ ԵԽ նախարարների կոմիտեի՝ անդամ երկրներին ուղղված (2007)14 հանձնարարական՝ Եվրոպայում ոչ-կառավարական կազմակերպությունների իրավական կարգավիճակի վերաբերյալ:

առումով²: Ի դեպ, նշենք, որ Հանձնարարականի այս դրույթը չի տարածվում ընդհանուր կիրառելի այն պահանջների վրա, որոնք վերաբերում են իրավաբանական անձանց բոլոր տեսակների ֆինանսական հաշիվների վարմանը և հոսքերի վերահսկմանը:

3. Human Rights Watch կազմակերպությունն էլ այս առումով պնդում է, որ ՀԿ-ների գործունեությունը պետական համապատասխան մարմինների կողմից պետք է վերահսկվի միայն հարկային պարտավորությունների կատարման մասով կամ լիցենզավորման ենթակա գործունեության դեպքում՝ նման պահանջների համապատասխանության մասով (օրինակ՝ բժշկական ծառայություն մատուցելու թույլտվության առկայություն)³:

4. Ի վերջո, իրոք, մարդկային և ֆինանսական մեծ ռեսուրսներ են պահանջվում ըստ Նախագծի տարվա ողջ ֆինանսական, հաշվապահական, գործունեության, ինչպես նաև հարկային և այլ մարմիններին տրված հաշվետվությունները մամուլում հրապարակելու համար, որի անհրաժեշտությունը, մեր կարծիքով, պատշաճ հիմնավորված չէ: Բացի դա, հասարակական կազմակերպություններն արդեն իսկ օրենքով սահմանված կարգով պարտավոր են հաշվետու լինել իրենց ֆինանսական ողջ գործունեության առումով:

5. Մինևույն ժամանակ, ըստ Հանձնարարականի, անկախ կազմակերպության կարգավիճակից, լինի դա առևտրային, թե ոչ-առևտրային ՀԿ-ները պետք է օգտվեն այն նույն հնարավորություններից, ինչ նախատեսված է մյուս իրավաբանական անձանց համար: ՀԿ-ները պետք է կրեն նույն պարտավորությունները, նրանց նկատմամբ պետք է կիրառվեն նույն սանկցիաները, այդ թվում՝ վարչական, քաղաքացիական, քրեական օրենսդրությամբ նախատեսված, որոնք կիրառվում են բոլոր իրավաբանական անձանց նկատմամբ⁴: Իսկ Նախագծի 6-րդ հոդվածը, մեր կարծիքով, լրացուցիչ և այլ իրավաբանական անձանց չպարտադրված պահանջ է առաջադրում, որը խտրական վերաբերմունք է հասարակական կազմակերպությունների նկատմամբ:

6. Որքան էլ որ Նախագիծը հիմնավորվում է ՀԿ-ների կողմից ներկայացված օրենքի շուրջ դիմում-բողոքներով և առաջարկություններով, այնուամենայնիվ տվյալ փոփոխությունների և լրացման իրավատնտեսական հետևանքները, մեր կարծիքով, չեն բխում ոչ ՀԿ-ների, ոչ էլ հայաստանյան քաղաքացիական հասարակության շահերից: Ավելին, ըստ մեզ, Նախագծի ընդունման հետևանքով, ծանր կացության մեջ առաջին հերթին կրնկնի հենց խնդրո առարկա հանդիսացող հասարակական կազմակերպությունների գործունեությունը:

7. Առաջարկություն - Չանտեսելով Նախագծի հիմնավորումը՝ «կազմակերպության գործունեության թափանցիկության սկզբունքի ապահովման համար», որպես լուծում, առաջարկում ենք՝ հասանելի դարձնել կազմակերպության գործունեությանը և ֆինանսական միջոցներին վերաբերող ողջ տեղեկատվությունը կազմակերպության իսկ կողմից իր կարողություններին համապատասխան ընտրված ճանապարհով, այն է՝ իր կայք էջի, էլեկտրոնային նամակների կամ որևէ այլ միջոցով, որը միաժամանակ իրենից

² ԵՄ (2007)14 հանձնարարականի պաշտոնական բացատրագիր (Explanatory Memorandum to Recommendation CM/Rec (2007) 14 of the Committee of Ministers to member states on the Legal Status of Non-Governmental Organisations in Europe) 114-կետ, 62-րդ պարբերություն:

³ Human Rights Watch, Proposals on Changes to the Russian Federal Laws on Regulating NGOs, Հավետվություն, 3-րդ կետ, ձեռք է բերվել հետևյալ կայք-էջից՝ <http://www.hrw.org/node/83165>

⁴ ԵՄ (2007)14 հանձնարարական, I մաս (Հիմնական սկզբունքներ) 7-րդ կետ:

լուրջ ֆինանսական բեռ չի ներկայացնի: Արդյունքում, կիրագործվեն նաև Նախագծով սահմանված նպատակները:

Բացի դա, որպես եզրափակում նշենք, որ հիմք ընդունելով Նախագծում արձարծված հարցերի կարևորությունը, անհրաժեշտ ենք համարում Նախագծի հեղինակների, ՀԿ-ների ներկայացուցիչների և այլ շահագրգիռ կողմերի միջև հանրային քննարկումների անցկացումը, որը կստեղծի իրավական որոշակիության մթնոլորտ և կանխատեսելիություն տնտեսվարող սուբյեկտների համար, ինչպես նաև հնարավորություն կընձեռնի ոլորտի ներկայացուցիչների մտահոգությունները և կարծիքները արտահայտելու համար: